



## ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ՆՈՐԱՅՐ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Այսօր բավական խնդրահարույց են կրթության որակի բարձրացման, դրա օբյեկտիվ գնահատման համակարգի ներդրման և հետադարձ կապի մեխանիզմների մշակման հարցերը: Կրթության որակն անհրաժեշտ է ուսումնասիրել համակարգային մոտեցման շրջանակներում: Համալսարանների վարկանշման միջազգային փորձը վկայում է, որ առանցքային բաղադրիչ են դասավանդողների արհեստավարժության և գիտական իրազեկության մակարդակը, ինչպես նաև վերապատրաստման և որակավորման մակարդակի բարձրացման շարունակական գործընթացի ապահովումը:

**Հիմնաբառեր.** կրթության որակ, կրթական համակարգ, հետադարձ կապ, դասավանդողների վերապատրաստում, ատեստավորում, կրթության ժամանակակից մարտահրավերներ, համալսարանների վարկանշում

JEL: I21, I29, J59, M53

Վերջին ժամանակներում բավական խնդրահարույց են համարվում կրթության որակի բարձրացման, որակի օբյեկտիվ գնահատման համակարգի ներդրման և հետադարձ կապի մեխանիզմների մշակման հարցերը: Կրթության որակի գնահատումը խիստ բարդ է, քանի որ պայմանավորված է մի շարք գործոններով: Կրթության գնահատականը ներկայացնելու և հետադարձ կապի ապահովումը բնութագրելու համար կրթական ծառայությունների վրա ազդող գործոնները պայմանականորեն կարող ենք վերագրել ներքին և արտաքին միջավայրերին:

Որպես արտաքին միջավայր կարող է դիտարկվել`

- պետությունը,
- հասարակությունը,
- տնտեսությունը,
- անհատը:

Որպես ներքին միջավայրի գործոններ կարելի է դիտարկել ներքոհիշյալ գործընթացները՝

- կրթական ծրագրերի մշակումը և հաստատումը,
- ուսումնառության գնահատումը,
- դասախոսական կազմի հավաքագրումը և ընտրությունը,
- դասախոսական կազմի մասնագիտական զարգացումը,
- աջակցությունը ուսանողներին,
- հրապարակայնության ապահովումը:

Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

Կրթության որակի առումով, որպես հետադարձ կապ կարելի է դիտարկել հասարակությունը, մասնավորապես՝

- բնակչության կրթական մակարդակը,
- երկրի յուրաքանչյուր բնակչի համար կրթության մատչելիությունը,
- մասնագիտական կրթության ազդեցությունը բնակչության զբաղվածության մակարդակի, գործազրկության, ՀՆԱ-ի վրա և այլն,
- կրթության ազդեցությունը (այդ թվում՝ մասնագիտական) քաղաքացիական հասարակության զարգացման, սոցիալական լարվածության թուլացման, իրավախախտումների քանակի նվազեցման վրա և այլն:

Կարևոր է ընդգծել, որ հետադարձ կապն ապահովող կարևոր երաշխիք է գործատուների, հասարակական կազմակերպությունների, ազգաբնակչության լայն ընդգրկվածությունն այդ գործընթացներին: Մշտադիտարկման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափ կարող է լինել թիրախային տարբեր խմբերի պատրաստվածության առանձնահատկությունների ներկայացումը (հրապարակային վերլուծական զեկույց շահագրգիռ, ոչ մասնագետների համար, մեթոդական ուղեցույցներ դասավանդողների համակազմի համար):

Համալսարանի դասավանդողների համակազմի հավաքագրման և ընտրության, ինչպես նաև վերապատրաստումների գործընթացի կատարելագործման համար նախ անհրաժեշտ է հետազոտել ՀՀ բուհերում առկա վիճակը, բացահայտել թերությունները, դրանք ծնող պատճառները և կատարված եզրահանգումների հիման վրա մշակել գործնական համարժեք առաջարկություններ:

Ներկայացված հարցադրումները կարևոր են, քանի որ համալսարանների վարկանշման (ռեյտինգավորում) միջազգային փորձը վկայում է այն մասին, որ համապատասխան համակարգերի առանցքային բաղադրիչ է համարվում համալսարանի դասավանդողների արհեստավարժության և գիտական իրազեկության մակարդակը, ինչպես նաև վերապատրաստումների և որակավորման բարձրացման շարունակական գործընթացի ապահովումը: Մասնավորապես՝ վարկանշավորման առանցքային ցուցանիշներ են համարվում, օրինակ, Նոբելյան և այլ միջազգային մրցանակակիր դասավանդողների թիվը, համալսարանի գիտահետազոտական աշխատանքների նորարարության մակարդակը, տվյալ բուհի դիպլոմի պահանջվածությունն աշխատանքի շուկայում, դիմորդների քանակը, ընդունելության մրցույթի մակար-

դակը մյուս համալսարանների համեմատությամբ, ուսման վճարի մեծությունը և այլն: Ինչ խոսք, այս ամենի հետ մեկտեղ, հսկայական դերակատարություն ունի նաև դասավանդողների շարունակական վերապատրաստումների կազմակերպումը:

Այս տեսանկյունից՝ աներկբա է այն փաստը, որը ՀՀ-ում գոյություն չունի մշակված միասնական համակարգ դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև շարունակական վերապատրաստումների գործընթացների կազմակերպման համար, որը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի բուհական շուկան գտնվում է անցումային շրջանում, երբ նոր կրթական համակարգի ձևավորումը զուգակցվում է միջազգային չափորոշիչների (այդ թվում՝ Բոլոնյան համաձայնագրի) ներդրմամբ: Ասել, թե կրթական համակարգի ձևավոխման գործընթացը շատ սահուն է ընթանում՝ առանց դժվարությունների, իհարկե, ճիշտ չի լինի, քանի որ նոր սկզբունքների ներդրման գործընթացը նոր հիմնախնդիրներ է առաջացնում, որոնք օպերատիվ լուծումների կարիք ունեն:

Մյուս կողմից՝ Հայաստանի պարագայում էական է այն հանգամանքը, որ բուհական շուկան վերջին տարիներին նոր միտումներ է դրսևորում, որոնք սկզբունքորեն փոխում են բուհական շուկայում ձևավորված իրավիճակը՝ դրան հաղորդելով մրցակցային միջավայրի նոր բաղադրիչներ: Արդյունքում՝ բոլոր բուհերը պարտադրված են գործունեություն ծավալել խաղի նոր կանոններով՝ մրցակցությանը դիմակայելու նպատակով: Այս կանոններն անհրաժեշտ է հաշվի առնել դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև վերապատրաստումների կազմակերպման և այդ գործընթացների հետադարձ կապի ապահովման համար:

ՀՀ-ում գործող բուհերը կարելի է դասակարգել 3 խմբի՝

1. Արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ բուհեր: Այս խմբում ներառվում են Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը, Հայաստանում Ֆրանսիական համալսարանը, ուկրաինական և ռուսական կապիտալով այլ բուհեր: Նշված համալսարանների գործունեության առանձնահատկությունն այն է, որ Հայաստան մուտք են գործել իրենց երկրներին բնորոշ կառավարման տեխնոլոգիաներով, գործում են միջազգային պայմանագրերի հիման վրա (որի պատճառով չեն մասնակցել ՀՀ-ում գործող արտոնագրման գործընթացին): Այս բուհերի վրա տարածվում են ՀՀ պետական բուհերի համար սահմանված կանոնակարգերը, սակայն գործնականում հաճախ դրանք չեն պահպանվում: Ասվածի վառ ասպարուցն այն է, որ վերոհիշյալ բուհերն առ այսօր գործում են ինքնուրույն, անկախ, սահմանված ներքին կանոնակարգերին համապատասխան, որոնք հաճախ հակասում են ՀՀ-ում գործող կանոններին: Օրինակ՝ Հայաստանում Ամերիկյան համալսարանի ընդունելության քննություններ են համարվում TOEFL-ը և SAT-ը, որոնք, ի դեպ, վճարովի են, ամբողջությամբ տարբերվում են ՀՀ ընդունելության քննություններից, ընդ որում, նշված քննությունները հանձնելու համար միջնակարգ դպրոցում ստացված գիտելիքները խիստ անբավարար են: Նման այլ հանգամանքներով պայմանավորված՝ այս խմբի մեջ մտնող բուհերը գործում են հարաբերական ինքնուրույնության պայմաններում, որն իր անմիջական ազդեցությունն է ունենում նաև դասավանդողների հավաքագրման, ընտրության, ինչպես նաև վերապատրաստումների գործընթացի կազմակերպման վրա: Ի դեպ, այս խմբի մեջ մտնող բուհերի

առանձնահատկությունն այն է, որ այստեղ դասավանդում են նաև հրավիրված դասախոսներ համապատասխան երկրների համալսարաններից: Այսինքն՝ դասավանդողների հավաքագրման և ընտրության հարցերը կազմակերպվում են ներքին կանոններին համապատասխան: Նույն տրամաբանությունն առկա է նաև դասավանդողների որակավորման բարձրացման և վերապատրաստումների կազմակերպման գործընթացներում: Նշենք, որ այս խմբի բուհերը օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների արդյունքում հարաբերականորեն մրցունակ են համարվում:

**2.** Պետական բուհեր, որոնք գործունեություն են ծավալում ըստ ՀՀ-ում գործող օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, իսկ դասավանդողների հավաքագրման, ընտրության և վերապատրաստումների գործընթացները ենթարկվում են ներքին կանոնակարգման: Որպես կանոն, այս խմբի մեջ մտնող բուհերն առանձնանում են հարաբերական կայունությամբ և կլանում են հանրապետության դիմորդների գերակշիռ մասին: Կանոնակարգվածության հետ մեկտեղ, այստեղ դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացներն ընդգծված սուբյեկտիվ բնույթ ունեն:

**3.** Սասնավոր բուհեր: Հարաբերականորեն ոչ մրցունակ բուհերի խումբն է (քանի որ այստեղ նկատելիորեն ցածր է ուսման վարձը, իսկ դիմորդները հիմնականում պետական բուհեր չընդունվածներն են), որտեղ գերազանցապես դասավանդում են պետական բուհերի դասախոսները՝ հավելյալ եկամուտներ ստանալու նպատակով (կրկնակի զբաղվածություն):

Վերը ներկայացված առանձնահատկություններով հանդերձ, ՀՀ-ում գործող բոլոր բուհերի համար բնութագրական են դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև վերապատրաստման գործընթացներում առկա ներքոհիշյալ թերությունները՝

- սուբյեկտիվիզմի առկայությունը (օբյեկտիվ չափորոշիչների բացակայությունը) դասավանդողների հավաքագրման և ընտրության պարզայում,
- դասավանդողների հավաքագրման և ընտրության մեխանիզմների ճկունության բացակայությունը,
- անբավարար շահադրդումը գիտահետազոտական աշխատանքների իրականացման բնագավառում,
- հստակ համակարգված և օպերատիվ հետադարձ կապի բաղադրիչների բացակայությունը,
- դասավանդողների վերապատրաստումների և որակավորման բարձրացման գործընթացների ոչ կանոնակարգվածությունն ու անկանոնությունը:

Վերը ներկայացված թերությունները բացասական ազդեցություն են ունենում ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի վրա, որի պատճառով ՀՀ ոչ մի բուհ տեղ չի գրավում աշխարհի լավագույն բուհերի առաջատար (top 1000)<sup>37</sup> դիրքերում: Հետևաբար՝ ՀՀ բուհական կրթության ժամանակակից մարտահրավերներից է վերը ներկայացված թերությունների անհապաղ վերացումը:

Կարևորելով դասավանդողների հավաքագրման և ընտրության գործընթացի նշանակությունը համալսարանների վարկանիշի ձևավորման գործում՝

<sup>37</sup> Տե՛ս <http://cwur.org/2014/>

հնարավոր տարբերակ կարող է համարվել յուրաքանչյուր համալսարանի դասավանդողների հավաքագրման և ընտրության միջբուհական հանձնաժողովների կազմավորումը, որին այլընտրանք կարող է լինել համալսարանական հանձնաժողովի ձևավորումը, որը պետք է կազմված լինի համալսարանի բոլոր ամբիոնների ներկայացուցիչներից: Ընդ որում, հանձնաժողովի անդամները պարտադիր կարգով 2 տարին մեկ անգամ պետք է ենթարկվեն ռոտացիայի: Հանձնաժողովը միասնական պետք է լինի դասավանդողների հավաքագրման և ընտրության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մրցույթների կազմակերպման ժամանակ: Նշված գործընթացի կատարելագործման նպատակով իբրև հանձնաժողովի անդամներ կարող են ընտրվել ամբիոնների առանցքային դասախոսները: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել նաև այլ պետական համալսարանների համապատասխան ամբիոնների դասախոսներ:

Համալսարանի դասավանդողների թափուր տեղերի համալրումը կարող է իրականացվել 2 տարբերակով՝ ներքին և արտաքին մրցույթներով: Դասավանդողների ընտրության ներքին կամ արտաքին մրցույթի տեսակը պետք է սահմանվի յուրաքանչյուր տեղի համար՝ հիմք ընդունելով որոշակի չափորոշիչներ: Արտաքին և ներքին մրցույթների հայտարարությունը՝ հստակ չափորոշիչներով, պետք է տեղադրվի ԶԼՄ-ներում, յուրաքանչյուր համալսարանի կայքում: Հարկ է հայտարարությունները տեղադրել նաև ՀՀ էլեկտրոնային աշխատաշուկան ներկայացնող կայքերում ([www.careercenter.am](http://www.careercenter.am), [www.job.am](http://www.job.am), [www.ashxatanq.am](http://www.ashxatanq.am) և այլն): Սա անհրաժեշտ է դասավանդողների հավաքագրման և ընտրության ընթացակարգի թափանցիկությունն ապահովելու նպատակով:

Ներքին և արտաքին մրցույթներին մասնակցելու համար դիմողների նախնական գնահատման ընթացքում անձնային, սուբյեկտիվ գործոնի ազդեցության բացառման նպատակով անհրաժեշտ է թեկնածուների ընտրության փուլային համակարգի ներդրումը՝ բաղկացած 2 հաջորդական փուլերից:

1-ին փուլում կատարվում է մրցույթին մասնակցել ցանկացողների անձնական տվյալների մուտքագրումը: *Դասավանդողների հավաքագրում, ընտրություն* համակարգչային ծրագրի օգնությամբ կիրականացվի դասախոսների նախնական ընտրություն, կհաշվարկվի Վ<sub>1</sub> գործակիցը:

Վ<sub>1</sub> գործակիցի հաշվարկման ժամանակ կիրառվում են հետևյալ չափորոշիչները.

1. գիտական աստիճան,
2. գիտական կոչում,
3. գիտամանկավարժական ստաժ,
4. հրապարակված գիտական աշխատանքներ, այդ թվում՝ արտասահմանյան պարբերականներում,
5. միջազգային որակավորման վկայականներ,
6. մասնակցություն միջազգային գիտաժողովներին:

Վ<sub>1</sub> գործակիցը յուրաքանչյուր թեկնածուի վերջնական գնահատականի մեջ ներառվում է առավելագույնը 40%-ի չափով:

Դասավանդողների ընտրության նախնական փուլն իրականացվում է բացառապես համակարգչային ծրագրի միջոցով. հաշվարկվում է յուրաքանչյուր թեկնածուի նախնական վարկանիշը՝ Վ<sub>1</sub> գործակիցը:

Վ<sub>1</sub> գործակիցը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր պաշտոնի՝ հետևյալ աղյուսակի օգնությամբ.

Աղյուսակ 1

**Ղասավանդողների ընտրության նախնական փուլի չափորոշիչների միավորներ**

Ընտրության չափորոշիչ	Ղասայտու	Ասիստենտ	Ղոցենտ	Պրոֆեսոր
1	2	3	4	5
Գիտական աստիճան	1-5	1-5	1-5	1-5
Գիտական կոչում	1-5	1-5	1-5	1-5
Գիտամանկավարժական ստաժ	1-5	1-5	1-5	1-5
Հրապարակված գիտական աշխատանքներ, այդ թվում՝ արտասահմանյան պարբերականներում	1-5	1-5	1-5	1-5
Միջազգային որակավորման վկայականներ	1-5	1-5	1-5	1-5
Մասնակցություն միջազգային գիտաժողովներին	1-5	1-5	1-5	1-5

**Գիտական աստիճանի և գիտական կոչման** առկայության պարագայում թեկնածուն ստանում է առավելագույնը 5, իսկ բացակայության դեպքում՝ 1 միավոր:

**Գիտամանկավարժական ստաժը** գնահատվում է հետևյալ կերպ.

- 0–5 տարի՝ 1 միավոր,
- 5–10 տարի՝ 2 միավոր,
- 10–20 տարի՝ 3 միավոր,
- 20–30 տարի՝ 4 միավոր,
- 40 և ավել տարի՝ 5 միավոր:

**Հրապարակված գիտական աշխատանքները** (այդ թվում՝ արտասահմանյան պարբերականներում) գնահատվում են հետևյալ կերպ.

- մինչև 5 գիտական հոդված՝ 1 միավոր,
- 5–10 գիտական հոդված՝ 2 միավոր,
- 10–20 գիտական հոդված՝ 3 միավոր,
- 20–30 գիտական հոդված՝ 4 միավոր,
- 31–ից ավելի գիտական հոդված՝ 5 միավոր:

**Միջազգային որակավորման վկայականներ** չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր վկայական հաշվվում է 2 միավոր: 3 և ավելի միջազգային որակավորման վկայական ունենալու դեպքում առավելագույնը կազմում է 5 միավոր:

**Մասնակցություն միջազգային գիտաժողովների** չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր մասնակցություն՝ 1 միավոր, 5 և ավելի մասնակցության դեպքում՝ 5 միավոր:

Ներկայացված չափորոշիչներին տրվում են համապատասխան կշիռներ՝ ըստ պաշտոնների.

Աղյուսակ 2

**Ղասավանդողների նախնական վարկանշավորման չափորոշիչների կշիռները (%)**

Չափորոշիչ	Ղասայտու	Ասիստենտ	Ղոցենտ	Պրոֆեսոր
1	2	3	4	5
Գիտական աստիճան	25	50	75	100
Գիտական կոչում	25	50	100	100
Գիտամանկավարժական ստաժ	50	50	100	100
Հրապարակված գիտական աշխատանքներ	100	100	100	100
Միջազգային որակավորման վկայականներ	100	100	100	100
Մասնակցություն միջազգային գիտաժողովներին	100	100	100	100

$U_{10}$  գործակցի հաշվարկը կատարվում է թեկնածուի վերաբերյալ մուտքագրված տվյալների հիման վրա՝ հետևյալ բանաձևի օգնությամբ.

$U_{10} = U_1 \times U_1 + U_2 \times U_2 + U_3 \times U_3 + U_4 \times U_4 + U_5 \times U_5 + U_6 \times U_6$ , որտեղ՝  $U_{10}$  – համապատասխան պաշտոնի նախնական փուլի գնահատականն է,

$U_1, U_2, U_3, U_4, U_5, U_6$  – համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափորոշիչների գծով տվյալ թեկնածուի հավաքած միավորներն են,

$U_1, U_2, U_3, U_4, U_5, U_6$  – 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափորոշիչների գծով տվյալ թեկնածուի հավաքած միավորների համապատասխան կշիռներն են:

Այնուհետև հաշվարկվում է  $U_1$  գործակիցը յուրաքանչյուր թեկնածուի համար.

$$U_{1u} = U_{10} \times 0.4$$

Նախնական ընտրությունից հետո թեկնածուներն անցնում են մրցույթի հաջորդ փուլ, որի պարտադիր պայմանն է թեկնածուի կողմից դասավանդվելիք առարկայի վերաբերյալ ուսումնական ծրագրի, մեթոդաբանության և տեխնիկայի ներկայացումը՝ համապատասխան գրականությամբ և լուսապատկերներով:

Մրցույթի 2-րդ փուլում յուրաքանչյուր թեկնածուի անանուն գնահատումն իրականացվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից՝ ներկայացված տվյալների և նյութերի հիման վրա: Առանձին դեպքերում հնարավոր է փորձնական դասի և դասալսման կազմակերպումը:

2-րդ փուլի գնահատումը կատարվում է ըստ հետևյալ չափորոշիչների.

1. առարկայի ուսումնական ծրագիր,
2. դասավանդման մեթոդաբանություն,
3. դասավանդման տեխնիկա,
4. լուսապատկերների որակ,
5. դասալսում,
6. ուսանողների հարցման արդյունքներ:

2-րդ փուլում կիրառվող չափորոշիչները և դրանց համապատասխան կշիռները ներկայացնենք աղյուսակների օգնությամբ.

**Աղյուսակ 3**

**Դասավանդողների ընտրության նախնական փուլի չափորոշիչների միավորներ**

Չափորոշիչ	Դասախոս	Ասիստենտ	Դոցենտ	Պրոֆեսոր
1	2	3	4	5
1. Առարկայի ուսումնական ծրագիր	1-5	1-5	1-5	1-5
2. Դասավանդման մեթոդաբանություն	1-5	1-5	1-5	1-5
3. Դասավանդման տեխնիկա	1-5	1-5	1-5	1-5
4. Լուսապատկերների որակ	1-5	1-5	1-5	1-5
5. Դասալսում	1-5	1-5	1-5	1-5
6. Ուսանողների հարցման արդյունքներ	1-5	1-5	1-5	1-5

**Աղյուսակ 4**

**Դասավանդողների նախնական վարկանշավորման չափորոշիչների կշիռները (%)**

Չափորոշիչ	Դասախոս	Ասիստենտ	Դոցենտ	Պրոֆեսոր
1	2	3	4	5
1. Առարկայի ուսումնական ծրագիր	25	50	75	100
2. Դասավանդման մեթոդաբանություն	25	50	100	100
3. Դասավանդման տեխնիկա	50	50	100	100
4. Լուսապատկերների որակ	100	100	100	100
5. Դասալսում	100	100	100	100
6. Ուսանողների հարցման արդյունքներ	50	50	50	50

Հանձնաժողովի անդամների գնահատականները մուտքագրվում են հավանականության, որի միջոցով հաշվարկվում է յուրաքանչյուր թեկնածուի  $U_2$  գործակցի միջին թվաբանականը:

$U_{20}$  գործակցի հաշվարկը կատարվում է թեկնածուի վերաբերյալ մուտքագրված տվյալների հիման վրա՝ հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$U_{20} = U_1 \times U_1 + U_2 \times U_2 + U_3 \times U_3 + U_4 \times U_4 + U_5 \times U_5 + U_6 \times U_6,$$

որտեղ՝  $U_{20}$  – համապատասխան պաշտոնի նախնական փուլի գնահատականն է,

$U_1, U_2, U_3, U_4, U_5, U_6$  – համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափորոշիչների գծով տվյալ թեկնածուի հավաքած միավորներն են,

$U_1, U_2, U_3, U_4, U_5, U_6$  – 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափորոշիչների գծով տվյալ թեկնածուի հավաքած միավորների համապատասխան կշիռներն են:

Այնուհետև հաշվարկվում է  $U_2$  գործակիցը մեծությունը յուրաքանչյուր թեկնածուի համար.

$$U_{24} = U_{20} \times 0.6$$

Յուրաքանչյուր թեկնածուի վերջնական գնահատականը (վարկանիշը) հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$U = U_{14} + U_{24},$$

որտեղ՝  $U$  – թեկնածուի վերջնական գնահատականն է,

$U_{14}$  – համակարգչային հավաքագրման, ընտրության ծրագրի մեքենայական գնահատականն է,

$U_{24}$  – համալսարանի դասավանդողների հավաքագրման և ընտրության հանձնաժողովի գնահատականն է:

Տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հաղթող է ճանաչվում առավելագույն գնահատական ստացած թեկնածուն:

Դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև շարունակական վերապատրաստումների գործընթացի արդյունավետության գնահատման համար կարևոր նշանակություն ունի հետադարձ կապի ապահովումը: Այսինքն՝ յուրաքանչյուր համալսարան պետք է մշակի դասավանդողների որակի, գիտական իրավասության, շարունակական վերապատրաստումների գնահատման և մշտադիտարկման գործիքակազմ:

Գործընթացի արդյունավետությունը կարող են բնութագրել ներքոհիշյալ չափորոշիչները.

- դասախոսական կազմ (պրոֆեսորներ, դոցենտներ),
- գիտական հոդվածների քանակ,
- միջազգային կոնֆերանսներին մասնակցություն,
- ուսումնական ծրագրերի համապատասխանություն բարձրակարգ բուհերի ուսումնական ծրագրերին,
- ուսումնական ծրագրերի պարբերական թարմացումներ,
- համագործակցություն միջազգային բուհերի հետ,
- ուսանողների մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին,
- դասախոսների հոսունության գործակից, դրոպաուտձառներ,
- ներքին հարցումներ ուսանողների շրջանում,
- դիմորդների թիվ,
- ուսման վարձերի չափ,
- արտասահմանի ուսանողների քանակ:

Դասավանդողների հավաքագրման և ընտրության, վերապատրաստումների գործընթացների հետադարձ կապը գնահատվում է հետևյալ կերպ.

**Աղյուսակ 5**

**Դասավանդողների հավաքագրման և ընտրության, վերապատրաստումների հետադարձ կապի ապահովման չափորոշիչների գնահատականները**

Չափորոշիչ 1	Գնահատական 2
1. Դասախոսական կազմ (պրոֆեսորներ, դոցենտներ)	1 – 5
2. Գիտական հոդվածների քանակ	1 – 5
3. Միջազգային կոնֆերանսներին մասնակցություն	1 – 5
4. Ուսումնական ծրագրերի համապատասխանություն բարձրակարգ բուհերի ուսումնական ծրագրերին	1 – 5
5. Ուսումնական ծրագրերի պարբերական թարմացումներ	1 – 5
6. Համագործակցություն միջազգային բուհերի հետ	1 – 5
7. Ուսանողների մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին	1 – 5
8. Դասախոսների հոսունության գործակից, դրդապատճառներ	1 – 5
9. Ներքին հարցումներ ուսանողների շրջանում	1 – 5
10. Դիմորդների թիվ	1 – 5
11. Ուսման վարձերի չափ	1 - 5
12. Արտասահմանցի ուսանողների քանակ	1 – 5

Հետադարձ կապի ապահովման չափորոշիչների գնահատումն իրակա-  
նացվում է հետևյալ կերպ.

**1. Դասախոսական կազմ (պրոֆեսորներ, դոցենտներ).**

- 50%-ը դոցենտներ և պրոֆեսորներ են՝ 1,
- 51 – 60%՝ 2,
- 61 – 70%՝ 3,
- 71 – 80%՝ 4,
- 81% և ավելի – 5:

**2. Հրապարակված գիտական հոդվածներ.**

- մինչև 10՝ 1,
- 11 – 20՝ 2,
- 21 – 30՝ 3,
- 31 – 40՝ 4,
- 41 և ավելի՝ 5:

**3. Միջազգային կոնֆերանսներին մասնակցություն.**

- յուրաքանչյուր մասնակցություն՝ 1,
- 5 և ավելի մասնակցություն՝ 5:

**4. Ուսումնական ծրագրերի համապատասխանությունը բարձր վարկա-  
նիշ ունեցող բուհերի ուսումնական ծրագրերին.**

- 1-ին 100-յակում ներառվող համալսարանների ուսումնական ծրագ-  
րերին համապատասխանություն՝ 5,
- 2-րդ 100-յակում՝ 4,
- 3-րդ 100-յակում՝ 3,
- 4-րդ 100-յակում՝ 2,
- 5-րդ 100-յակում՝ 1:

**5. Ուսումնական ծրագրերի պարբերական թարմացումներ.**

- մինչև 2 առարկայի դեպքում՝ 1,
- 3 – 4 առարկայի դեպքում՝ 2,
- 5 – 7 առարկայի դեպքում՝ 3,

8 – 10 առարկայի դեպքում՝ 4,  
11 և ավելի առարկայի դեպքում՝ 5:

**6.** Համագործակցություն միջազգային բուհերի հետ.  
յուրաքանչյուր մեկ բուհի հետ համագործակցություն՝ 1,  
5 և ավելի բուհերի հետ՝ 5:

**7.** Ուսանողների մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին.

յուրաքանչյուր հանրապետական գիտաժողովին մասնակցություն՝ 1,  
5 և ավելի մասնակցություն՝ 5,  
1 միջազգային գիտաժողովին մասնակցություն՝ 2,  
3 և ավելի մասնակցություն՝ 5:

**8.** Դասախոսների հոսունություն.

10% և ավելի՝ 1,  
8 – 9%՝ 2,  
6 – 7%՝ 3,  
4 – 5%՝ 4,  
1 – 3%՝ 5:

**9.** Ներքին հարցումներ ուսանողների շրջանում.

վատ է արտահայտվում ուսանողների 50%-ը՝ 1,  
40 – 49%՝ 2,  
30 – 39%՝ 3,  
20 – 29%՝ 4,  
10 – 19%՝ 5:

**10.** Դիմորդների աճ. անհատական վերլուծություն՝ կախված տարիներից.

կայուն աճ՝ 5,  
կայուն նվազում՝ 1:

**11.** Ուսման վարձերի չափ. անհատական վերլուծություն՝ փոխկապված դիմորդների թվի աճի կամ նվազման հետ.

ուսման վարձերի աճի պարագայում դիմորդների թվի աճ՝ 5,  
ուսման վարձերի աճի պարագայում դիմորդների թվի նվազում՝ 1:

**12.** Արտասահմանյան ուսանողների քանակ.

աճ՝ 5,  
նվազում՝ 1:

Վերը ներկայացված ցուցանիշները յուրաքանչյուր տարի պետք է հիմնավոր վերլուծության ենթարկվեն՝ արդյունքներն ամփոփելով մշտադիտարկման հաշվետվության մեջ: Դա կարող է կազմել համալսարանի ներքին աուդիտի ստորաբաժանումը՝ մանրամասն վերլուծելով վերը ներկայացված յուրաքանչյուր ցուցանիշի միտումները՝ հստակ նշելով աճի կամ նվազման հիմնավոր պատճառները: Հաշվետվությունը կազմելուց առաջ՝ առարկայի քննությունից անմիջապես հետո, ուսանողների շրջանում պարտադիր պետք է անցկացվեն անանուն հարցումներ յուրաքանչյուր դասախոսի գիտելիքների, դասավանդման մեթոդաբանության, տեխնիկայի, մատչելիության, գնահատման օբյեկտիվության վերաբերյալ:

**13.** Վերապատրաստումների քանակը գնահատվում է վերը ներկայացված մեթոդաբանությամբ:

Դասավանդողների հավաքագրման և ընտրության, ինչպես նաև վերապատրաստումների գործընթացների արդյունավետությունը գնահատվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

**Աղյուսակ 6**

**Դասավանդողների հավաքագրման, ընտրության և վերապատրաստումների հետադարձ կապի գնահատման սանդղակ**

<i>Միավորների հանրագումար</i>	<i>Արդյունավետության գնահատական</i>
1	2
12 – 24	անբավարար
25 – 34	ցածր
35 – 44	միջին
45 – 54	լավ
55-ից բարձր	բարձր

Կարևոր է նաև ուսանողներին ցուցաբերվող աջակցությունը գիտամեթոդական ցուցումների հրատարակմամբ, անհատական աշխատանքների միջոցով:

**АРЕВИК ОГАНЕСЯН**

*Доцент кафедры „Менеджмента” АГЭУ,  
кандидат экономических наук*

**НОРАЙР САФАРЯН**

*Доцент кафедры „Банковского дела и страхования” АГЭУ,  
кандидат экономических наук*

**Проблемы управления качеством высшего образования в РА.** – В последнее время очень проблематичными являются вопросы, касающиеся повышения качества образования, внедрения системы объективной оценки качества образования и обработки механизмов обратной связи. Качество образования нужно рассматривать при помощи системного подхода. Международный опыт рейтингирования университетов свидетельствует о том, что главной составляющей систем рейтингирования является уровень профессионализма и научной компетентности преподавателей университета, а также обеспечение постоянного процесса переподготовки и повышения их квалификации.

**Ключевые слова:** *качество образования, система образования, обратная связь, повышение квалификации преподавателей, аттестация, современные вызовы образования, рейтингование университетов.*

JEL: I21, I29, J59, M53

**AREVIK HOVHANNISYAN**

*Associate Professor at the Chair of „Management”  
at ASUE, PhD in Economics*

**NORAYR SAFARYAN**

*Associate Professor at the Chair of  
“Banking and Insurance” at ASUE, PhD in Economics*

**The Problems of Higher Education Quality Management in the RA.** – Recently, the increase of education quality, implementation of the system of objective quality assessment and development of feedback mechanisms are considered to be problematic. Education quality should be considered with the help of systemic approach. International experience of university ranking shows that professional approach of instructors and the level of scientific competence, as well as the continuous process of training and qualification improvement are the key ingredients of the ranking system.

**Key words:** *education quality, educational system, feedback, training of instructors, certification, contemporary challenges in education, university ranking.*

JEL: I21, I29, J59, M53